

## Հայտարարություն

«Սյունիքի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ «Մեղրի-Կապան» ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղու համար:

### Ցանկ

#### ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ
2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր / գրանցման վկայագրեր/
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված առողջական վիճակի մասին տեղեկանքներ
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու / կահավորելու/ դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ
9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժակազմի հավաքակալանի սեփականության / օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայական
11. Փակ ծրարով ներկայացվում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի փոխադրման գինը, ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սուսնձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիքը չունենալու դեպքում՝ սուսնձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիքը չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

**Մրցույթի անցկացման օրը՝** 2013թ-ին հոկտեմբերի 24-ին, «Սյունիքի մարզպետարանում, ժամը 15<sup>00</sup>»:

**Հայտերն ընդունվում են՝** Սյունիքի մարզպետարանում ամեն օր՝ 10<sup>00</sup>- 17<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Հայտերի ընդունման վերջին ժամկետն է՝** 2013 թվականի հոկտեմբերի 17-ին:

**Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝** /0285/ 2-42-52 հեռախոսահամարով

**Մրցույթն անցկացվում է՝** «Սյունիքի մարզպետարանում» կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողով